ՈՒՐԵՄՆ ՍԱ ՍԵՌԱԿԱՆ ՉԱՐԱԾԱՀՈՒՄ Է:



COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Քեզ դուր չի՞ գալիս, թե ինչպես են նայում կամ դիպչում քեզ:

Ինչ-որ մերկ պատկերներով, նկարներով են կիսվե՞լ համացանցում:

Կասկածու՞մ ես, որ քեզ հետ շփման թաքնված շարժառիթ կա:

Վստա՞հ չես, որ դու նույնպես ուզում ես դա անել:

Քրեական վարույթ սկսվե՞լ է:

ԴՈՒՔ ՄԻԱԿԸ ՉԵՔ, ՈՎ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԻ:

ԸՆԹԵՐՑԻ՛Ր ԱՅԼՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԻՄԱՑԻ՛Ր ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

ՈՒՐԱԽ ԵՄ, ՈՐ ԻՆՁ ՏԵՂՅԱԿ ՊԱՀԵՑԻՐ

Ի՞նչ է պատահել, սիրելի՛ս, անցյալ գիշեր շատ վիատված եկար տուն:

Ոչինչ էլ չի պատահել...

Պարզապես մինչև հիմա ժամադրությունից միշտ ժպիտով ես եկել տուն:

Դե ասում եմ՝ ոչինչ չի պատահել:

Լավ: Եթե ցանկություն ունենաս խոսել, ես պատրաստ եմ լսել քեզ:

Առանձնապես ոչինչ էլ չի եղել, մենք վիճել ենք ...

Օհ, սիրելի՛ս, ցավում եմ: Ի՞նչ է պատահել:

...նա շարունակ ասում էր, որ իրեն չեմ սիրում...

Բայց ինչո՞ւ պիտի այդպես մտածեր:

Գաղափար չունեմ... Կամ... Բայց: Միայն թե ես չեմ ուզում, որ դու խիստ բարկանաս:

Կաշխատեմ :)

Մենք դեռ չենք... Ուրեմն... նա կարծում է, որ 15 տարեկան ուրիշ աղջիկների համար մեծ բան չէ որևէ մեկի հետ քնելը: Այնպես չէ, որ ես դրանից մեծ խնդիր եմ սարքում: Բայց մենք դեռ նոր ենք հանդիպում, և... ես... Այնպես որ... Հասկանու՞մ ես:

Հասկանում եմ: Դու դեռ պատրաստ չես, կամ չես ուզում, որ դա հիմա տեղի ունենա:

Ճիշտ է:

Առաջին անգամից առաջ (ինչպես և ամեն անգամ) ամենակարևորը վստահ լինելն է, որ դու դա ցանկանում ես և որ զուգընկերդ նույնն է ուզում, ինչ՝ դու:

Նա ասում է, որ եթե իսկապես սիրեի իրեն, նույնիսկ չէի վարանի իր հետ սեքսով զբաղվել:

Սերը, ինչ-որ մեկին սիրելը նույնը չէ, ինչ՝որևէ մեկի հետ միասին լինելու ցանկությունը: Այդ զգացմունքներն առանձին են գալիս:

Ես դա չեմ հասկանում: Քանի որ նա ինձ իսկապես դուր է գալիս...

Եթե ցանկությունը երկկողմանի չէ, այլ նա շանտաժի է ենթարկում քեզ կամ ճնշում է գործադրում քեզ վրա, դա միայն վկայում է, որ նրա սեփական ցանկությունն ավելի կարևոր է իր համար, քան՝ քո զգացմունքները կամ մտադրությունները:

Բայց ես չեմ ուզում ցավ պատճառել նրան: Ես չեմ ուզում, որ նա ինձանից բաժանվի...

Իհարկե, սիրելիս: Բայց դա արդեն վերաբերում է նրա կողմից իր ցանկությունը վերահսկելուն, և քո մեղքը չէ: Ուստի դու որևէ կերպ պատասխանատու չես նրա զգացմունքների համար:

Բայց այդ դեպքում դա նշանակում է, որ նա ինձ չի՞ սիրում:

Ես չգիտեմ, գուցե նա կարծում է, որ սիրում է քեզ, բայց սերը երբեք չի արտահայտվում բռնության կամ ճնշման ձևով:

Օհ, սա այնքան ամոթալի է...

Ուրախ եմ, որ պատմեցիր ինձ: Նաև շատ հպարտ եմ, որ կարողացել ես ,ոչ ասել:

ծնող

ՍԵՔՍՈՒԱԼ ԹԵՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՃԱԽ ԴԺՎԱՐ Է ԽՈՍԵԼ: ՀԱՏԿԱՊԵՍ, ԵՐԲ ԴՐԱ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼԻՍ ՈՒՆԵՆՈՒՄ ԵՍ ԱՄՈԹԻ, ՄԵՂՔԻ ԿԱՄ ՎԱԽԻ ԶԳԱՑՈՒՄ:

ԴՈՒ ՄԻԱՅՆԱԿ ՉԵՍ: ԵԹԵ ՔԵԶ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՑԱՎ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ ԿԱՄ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՍ, ԽՈՍԻՐ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՉԱՓԱՀԱՍ ՄԵԿԻ ՀԵՏ, ՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՍ ՎՍՏԱՀԵԼ: ԳՈՒՅԵ ԾՆՈՂԻ, ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ, ՈՒՍՈՒՑՉԻ, ՀՈԳԵԲԱՆԻ, ՑԱՆԿԱՑԱԾ ՄԵԿԻ, ՈՐԻ ՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՍ ԱՌԱՆՑ ՎԱԽԵՆԱԼՈՒ ԱՆԿԱԾԿԱՆԴ ԽՈՍԵԼ, և ԼՍԵԼ ՆՐԱՆ:

ՔՈ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԽՎԱԾ Է ՔՈ ՏԱՐԻՔԻՑ. ՄԻԱՅՆ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՎ ԱՊՐԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՉԱՓԱՀԱՍ ՏԱՐԻՔԻ ՀԱՍԱԾ ԵՐԵԽԱՆ ԿԱՐՈՂ Է ՎԱՎԵՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒՆ:

ՍԵՔՍԸ ԼԻՆՈՒՄ Է ԲԱՑԱՌԱՊԵՍ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ: ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ԴԵՊՔՈՒՄ ԴԱ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ Է: ԲՌՆՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԵ, ԵՐԲ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՕԳՏՎՈՒՄ Է ԱՌԻԹԻՑ, ՈՐ ԴՈՒ ՀԱՃՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՍ, ՀԱՐԲԱԾ ԵՍ ԿԱՄ ԱՆԳԻՏԱԿԻՑ, ՈՒՍՏԻՒ Ի ՎԻՃԱԿԻ ՉԵՍ ԻՐԱՊԵՍ ԳՆԱՀԱՏԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ:

ԵՐԲԵՔ ՊԵՏՔ ՉԷ ԱՄԱՉԵԼ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼ:

ԵԹԵ ՉԳԻՏԵՍ, ԹԵ ՈՒՄ ՀԵՏ ԽՈՍԵԼ, ԿԱՐՈՂ ԵՍ ԱՆՎՃԱՐ ՀԱՆԳԱՀԱՐԵԼ ԹԵԺ ԳԻԾ և ԽՈՍԵԼ ՈՐԵՎԷ ՄԵԿԻ ՀԵՏ, ՈՎ ՀԱՍԿԱՆՈՒՄ Է և ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ ՔԵԶ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼ, ԹԵ ԻՆՉ ԱՆԵԼ:

ՔԵԶ ՀԱՐՄԱՐ ԹԵԺ ԳԻԾԸ ԿԱՐՈՂ ԵՍ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ՝

HTTPS://WWW.CHILDHELPLINEINTERNATIONAL.ORG/CHILD-HELPLINES/CHILD-HELPLINE-NETWORK/

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԵԺ ԳԻԾ՝ 116-111

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ՝ 0800 61 111

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝ HTTP://CHILDREN.OMBUDS.AM/

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ HTTPS://FORCHILD.AM/ ՀԵՌԱԽՈՍ՝ 85-00

ՈՒՐԵՄՆ ՍԱ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՍԵՌԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒ՞Մ

Հավանաբար լսել ես, որ ֆիզկուլտուրայի ուսուցիչը հեռացել է դպրոցից: Ուզում եմ այդ մասին խոսել քեզ հետ:

Նրան իսկապես հեռացրել են:

Ինձ ասացին, որ նրան դպրոցից հեռացրել են, որովհետև ծնողներից մեկը նրան մեղադրել է մի աղջկա նկատմամբ սեռական չարաշահման մեջ:

Դպրոցը պատասխանատու է սեռական չարաշահումից քեզ պաշտպանելու համար: Դա նշանակում է, որ ոչ ոք չի կարող քեզ դիպչել առանց քո համաձայնության: Հատկապես մեկը, որ պատասխանատու է քեզ համար:

Ուրեմն դա համարվում է սեռական չարաշահու՞մ:

Այո, բայց նաև չի կարելի, օրինակ, ակնարկ կամ առաջարկ անել քեզ, որի պատճառով կարող ես անհարմար կամ նվաստացած զգալ կամ ամաչել:

Լավ, իսկ եթե աղջիկը սխալ է հասկացել:

Եթե որևէ վիրավորական բան է եղել, դա պետք է քննվի՝ անկախ նրանից, թե ով է բռնարարը: Ահա թե ինչու է կարևոր, որ չափահասները տեղեկացվեն դրա մասին:

Ես լսել եմ, որ նա նաև վիրավորել էր մի աղջկա հանդերձարանում: Բայց կարծում եմ, որ պարզապես կատակել էր ...

Բռնության բոլոր ձևերն արգելված են: Եթե որևէ մեկը ծաղրում է քեզ կամ պարզապես կոպիտ և ակնհայտ սեռական բնույթի կատակ է անում, որը քեզ ստիպում է ամաչել, ապա դա նույնպես չարաշահում է:

Կարծում եմ՝ այդ աղջիկը պարզապես դուր էր եկել նրան, և այդքանը: Դասընկերս ասում էր, որ մարզումներից հետո նրանք հաճախ էին միասին ժամանակ անցկացնում:

Այո, ես էլ եմ լսել, որ նրանք հանդիպում էին:

Նույնիսկ եթե ուսուցչի և աշակերտի միջև հարաբերությունները կարող են սիրային թվալ, ուժերի բալանսը հավասարաչափ չէ, և ուսուցիչը պարզապես չարաշահում է իր հեղինակությունը և աշակերտի վստահությունը, ինչը երբեք լավ չի կարող լինել:

Իսկ եթե աղջիկը համաձայնե՞լ է:

Նշանակություն չունի: Հարցը միշտ ազատ և անկախ ընտրության մեջ է: Իրականում աշակերտը չի կարող ազատորեն համաձայնել, քանի որ ուսուցիչը իշխանություն ունի նրա նկատմամբ, հետևաբար այդպիսի հարաբերությունները միշտ արգելված են:

Դա նաև նրանց մեղքն է, եթե թույլ են տալիս, որ դա տեղի ունենա ...

Սեռական չարաշահումը երբեք երեխայի մեղքը չէ: Դեպքերի մեծ մասը չի բացահայտվում, քանի որ երեխաներն ամաչում են տեղի ունեցածից և մեղադրում իրենք իրենց: Սեռական հարկադրանքը, ուժը կամ սպառնալիքը միշտ համարվում է հանցագործություն:

ՍԵՌԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ՊԱՏԺԵԼԻ Է: ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԴԱ ԿԱՏԱՐԵԼ Է ԾՆՈՂԸ, ՈՒՍՈՒՑԻՉԸ, ՄԱՐԶԻՉԸ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՄԵԿԸ, ՈՒՄ ԴՈՒ ԱՊԱՎԻՆՈՒՄ ԵՍ ԿԱՄ ՈՒՄԻՑ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՍ, ՆՈՒՅՆԻՍԿ ԱՅԼ ԵՐԵԽԱ ԿԱՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ:

ԴԱ ԵՆԹԱԿԱ Է ԻՍԿԱՊԵՍ ԽԻՍ ԿԱՆՈՆՆԵՐԻ և ՊԱՏԺԻ:

ՎՍՏԱՀԻՐ ՔՈ ՎԱՏ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԸՆԴԱՄԵՆԸ ՏԵՍԵԼ ԿԱՄ ԼՍԵԼ ԵՍ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՄԱՍԻՆ: ՊԱՏՄԻՐ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ, ՈՒՄ ՎՍՏԱՀՈՒՄ ԵՍ, ՈՐՊԵՍԶԻ ԿԱՐՈՂԱՆԱՍ ԳՏՆԵԼ ՃԻՇՏ ԼՈՒԾՈՒՄԸ ՔՈ և ԸՆԿԵՐՆԵՐԻԴ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

ՈՒՍՈՒՑՉԻ և ԱՇԱԿԵՐՏԻ ՄԻՋև ԻՆՏԻՄ ՇՓՈՒՄԸ ՄԻՇՏ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՉԱՐԱՇԱՀՈՒՄ: ԻՆՉՊԵՍ ՍԵՌԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ՄԻՇՏ ՉԱՓԱՀԱՍՆ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ, ԱՇԱԿԵՐՏԸ ՄԵՂԱՎՈՐ ՉԷ:

ԵԹԵ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՍՏԻՊՈՒՄ Է ՔԵԶ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՔՈ ԿԱՄՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ, ԱՅԴ ԱՆՁԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՈՒՄ: ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ՍՏԻՊԵԼ ՔԵԶ ՀԱՆԴԻՊԵԼ, ԳՐԿԵԼ ԿԱՄ ՀԱՄԲՈՒՐԵԼ ԻՐԵՆ: ՊԱՏԺԵԼԻ Է ՆԱԵ, ԵԹԵ ԱՆՁԸ ՅԱՎ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ՝ ՕՐԻՆԱԿ ՍԵՂՄՈՒՄ, , ՇՈՇԱՓՈՒՄ, , ՇՈՅՈՒՄ Է ՔԵԶ, ՔՈ ՄԱՐՄԻՆԻ ՈՐԵՎԷ ՀԱՏՎԱԾ, ԿԱՄ ՍՏԻՊՈՒՄ Է ՊՈՌՆՈԳՐԱՖԻԱՅՈՒՄ ՆԱՅԵԼ: ԲԱՑԻ ԱՅԴ, ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՆԱԵ, ՈՐ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՀՊՎԻ ՔՈ ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻՆ ՔՈ ԿԱՄՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ, ՍՏԻՊԻ ՔԵԶ ՁԵՌՆԱՇԱՐԺՈՒԹՅԱՄԲ ՁԲԱՂՎԵԼ ԻՐ ԱՌՋև ԿԱՄ ՍՏԻՊԻ ՍԵՔՍՈՎ ՁԲԱՂՎԵԼ ԻՐ ՀԵՏ:

հոգեբան

ԻՍԿ ԵԹԵ ՆԱ ԹԱՔՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐ ՈՒՆԻ՞

Բարև, ես երբեք չեմ զանգահարել, բայց ինձ խորհուրդ է պետք, որովհետև ես ունեմ մի ընկերուհի ... և փոքր-ինչ անհանգստանում եմ նրա համար:

Բարև: Ուրախ եմ, որ զանգահարել ես ինձ:

Մինչև հիմա նա ասում էր, որ շուտով ընդունելության քննություն է հանձնելու իսկ այժմ գրեթե դպրոց չի հաճախում, շատ բացականեր ունի:

Ինչ-որ բան է պատահել:

Նա նոր ընկեր ունի, տարիքով մեծ ինչ-որ տղա է, որի հետ բավական հաճախ է հանդիպում:

Այս մասին որևէ այլ բան կարող ես ինձ պատմել:

Նրանք հանդիպել են մի խնջույքի ժամանակ: Սովորաբար, երեխաների խնամքի կենտրոնում մեզ գիշերները դուրս չեն թողնում, բայց նա այդ գիշեր կարողացել էր ծլկել: Այդ օրվանից նա միշտ այդ մարդու հետ է և այլևս չի կիսվում ինձ հետ: Այդ մարդն իր մեքենայով գալիս է նրա հետևից, անընդհատ նրան տանում է տարբեր տեղեր, կինո, քաղաք և այլն:

Ես հասկանում եմ, որ քեզ համար դա դժվար է:

Նա ամբողջովին փոխվել է, գրեթե չի շփվում մեզ հետ, իսկ շփվելու դեպքում էլ շատ տարօրինակ է պահում, ամեն ինչից վրդովվում է, կարծում է՝ կարող է ամեն ինչ անել:

Այդ մասին կարող ես խոսել նրա հետ:

Վերջերս գրեթե միմյանց չենք տեսնում: Նա միայն երբեմն պատասխանում է ինձ չաթում, նույնիսկ երբ տանն է, իրեն տարօրինակ է պահում, երբեմն ուրախությամբ գրկում է ինձ, իսկ երբեմն էլ շրխկոցով փակում է դուռը իր հետևից:

Լավ է, որ որոշել ես զանգահարել: Հնարավոր է, որ քո ընկերուհին իր հարաբերություններում հիմա հրաշալի է զգում, սակայն դա կարող է վտանգավոր լինել:

Ինչու՞ դա կարող է վտանգավոր լինել:

Երբեմն պատահում է այնպես, որ չափահասները սերտ հարաբերություններ են ստեղծում երեխաների հետ և ձեռք են բերում նրանց վստահությունը, նրանց հատուկ ուշադրություն են հատկացնում և ուշագրավ իրեր տալիս, բայց ոչ թե այն պատճառով, որ սիրում են նրանց, այլ որպեսզի ստիպեն նրանց ինչ-որ բաներ անել և երեխային դնել այնպիսի իրավիճակում, որ նա չկարողանա ,ոչե ասել, նույնիսկ եթե այդ ամենը նրան դուր չի գալիս:

Ես չեմ ճանաչում այդ մարդուն, բայց կխելագարվեմ, եթե նա ցավ պատճառի ընկերուհուս...

Դու երբևէ այս մասին այլ մեկի հետ խոսել ես, օրինակ՝ չափահասի: Օրինակ՝ դպրոցում կարող էին նկատած լինել, որ ինչ-որ բան այն չէ:

Ընկերուհիս ինձ կատի, եթե դրա մասին խոսեմ: Բայց նրա հետ խոսելն անհնար է:

Դա նրա մեղքը չէ և քո մեղքը չէ: Նրան պետք է պաշտպանել այդ մարդուց: Եթե փորձում ես օգնել նրան, չի նշանակում, որ դավաճանում ես, նշանակում է, որ պաշտպանում ես նրան:

Մարդիկ են գալիս: Ես պետք է գնամ:

ՕԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱՆՎՃԱՐ և ԱՆԱՆՈՒՆ ԹԵԺ ԳԻԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ԵԹԵ ՈՒԶՈՒՄ ԵՍ ՊԱՏՄԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ՄՏԱԾՈՒՄ ԵՍ, ՄԻԱՅՆԱԿ ԵՍ ԶԳՈՒՄ, ՉԳԻՏԵՍ, ԹԵ ՈՒՄ ԴԻՄԵԼ, ՋԱՆԳԱՀԱՐԻՐ ԹԵԺ ԳԻԾ: ՔԵԶ ԿԼՍԵՆ և ԿԸՆԴՈՒՆԵՆ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԵԺ ԳԻԾ՝ 116-111: ՔԵԶ ՀԱՐՄԱՐ ԹԵԺ ԳԻԾԸ ԿԱՐՈՂ ԵՍ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ՝

HTTPS://WWW.CHILDHELPLINEINTERNATIONAL.ORG/CHILD-HELPLINES/CHILD-HELPLINE-NETWORK/

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԵԺ ԳԻԾ՝ 116-111

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆՑ՝ 0800 61 111

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝ HTTP://CHILDREN.OMBUDS.AM/

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝ HTTPS://FORCHILD.AM/ ,

ԵԹԵ ՎԱՏ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՍ, ՈՐ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ԳՈՒՅՑԵ ՔՈ ԿԱՄ ՔՈ ԸՆԿԵՐՈՋ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԹԱՔՆՎԱԾ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ, ԱՊԱ ԽՈՍԻՐ ՉԱՓԱՀԱՍԻ ՀԵՏ, ՈՒՄ ՎՍՏԱՀՈՒՄ ԵՍ:

ԵԹԵ ՈՐԵԱԷ ՄԵԿՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ՝ ՆՎԵՐՆԵՐԻ, ԱԼԿՈՀՈԼԻ, ԾԽԱԽՈՏԻ, ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՄԻ ԴԻՄԱՑ, ԱՊԱ ԴԱ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ և ՆՈՒՅՆԻՍԿ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ: ՅԱՆԿԱՑԱԾ ՈՔ, ՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ՀԱՄՈԶՈՒՄ ԿԱՄ ՀԱՐԿԱԴՐՈՒՄ Է ԵՐԵԽԱՅԻՆ ԴԱ ԱՆԵԼ, ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՈՒՄ:

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ, ՈՐ ԵՐԵԽԱՆ ԲԱՎԱԿԱՆ ՄԵԾ Է ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ. ՉԱՓԱՀԱՍԻ ՀԱՄԱՐ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ԱՌԱՋԱՐԿԵԼԸ ՄԻՇՏ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ:

թեժ գիծ

ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱԼ

Բարև, ժամանակ ունեմ:

Իհարկե: Ի՞նչ է պատահել: Վաղուց չենք տեսնվել:

Դե ամեն ինչ պատահում է„ Ահա այն մարդը, ում մասին խոսում էինք:

Հիանալի՛ է: Դու նրա հետ առցա՞նց ես ծանոթացել:

Այո: Նա գրեց ինձ, և մենք սկսեցինք զրուցել, ու գիտես, նա շատ լավն է: Նա լիովին հասկանում է, թե ինչի միջով եմ անցնում: Նրան էլ են բուլլինգի ենթարկել, ինչպես և ինձ: Բայց նրա ծնողները շատ ավելի հեշտությամբ են ընդունել, որ նա համասեռամոլ է:

Ուրեմն արդեն հանդիպել եք:

Դե հարցը հենց դա է: Նա տեղացի չէ, բայց գալու է այս հանգստյան օրերին և ուզում է, որ հանդիպենք:

Դա իսկապես հետաքրքիր է: Իսկ ի՞նչ գիտես նրա մասին:

Նա շատ ուշադիր է, միշտ հարցնում է, թե ինչ է պատահել ինձ, արդեն ամեն ինչ գիտի ընկերներիս մասին: Ի դեպ՝ նա վարորդական իրավունք ունի, այնպես որ, կարծում եմ, 18 տարեկանից մեծ է:

Պարզ է: Իսկ նկարնե՞ր ունի իր էջում:

Իհարկե, գրեթե ամենուր ձամփորդել է: Ես ստուգել եմ, նրա էջը կեղծ չէ, ամեն ինչ նորմալ է:

Ուրեմն ի՞նչ ես մտածում:

Չգիտեմ: Կարծես թե նրա հետ կապված ամեն ինչ կարգին է... Նա ինքն է լուսանկարում, ուստի սովորաբար լուսանկարներում չի երևում: Բայց նա ունի հետևորդներ ինստագրամում և գրանցված է սնեփչաթում:

Ամեն դեպքում զգույշ լինելը չի խանգարի: Տեսախցիկով խոսե՞լ եք:

Ոչ, նա ցանկանում է, որ դա անակնկալ հանդիպում լինի:

Լավ, բայց այնուամենայնիվ օգտակար և կարևոր կլիներ մտածել այս իրավիճակի մասին: Եթե որոշես գնալ, որովհետև գտնում ես, որ դա ապահով է, գոնե ասա որևէ մեկին, թե որտեղ եք հանդիպելու, նախընտրելի է՝ որևէ չափահասի, որպեսզի իմանան, թե կոնկրետ որտե՞ղ և ո՞ւմ հետ ես հանդիպելու:

Այո, իհարկե: Բայց ծնողներս կկատաղեն: Ընկերս հոր տանն է լինելու... Ասենք՝ իմ զարմիկը կարգին տղա է:

Լավ, դա կարծես լավ միտք է, հավանաբար, նա նույնիսկ կարող է մոտակայքում լինել: Որտե՞ղ եք պայմանավորվել հանդիպել:

Նա ինձ վերցնելու է լողի պարապմունքից հետո և գնալու ենք դրսում լուսանկարներ անելու: Նա ինչ-որ նախագիծ է անում և ասում է, որ ես համապատասխանում եմ դրա համար:

Ես հասկանում եմ՝ ինչ նկատի ունես, բայց ...

Ամենավատը ի՞նչ կարող է պատահել:

Դե գիտես՝սեքսով զբաղվելու որոշման համար իրավաբանորեն դու ես պատասխանատու: Բայց դա չի նշանակում, որ նա կարող է քեզ հետ անել որևէ բան, որ դու չես ցանկանում՝ ո՛չ լուսանկարել և առհասարակ ոչի՛նչ:

Լավ...

Ամեն դեպքում չե՞ս կարծում, որ ավելի լավ է հանդիպել ավելի մարդաշատ վայրում: Վերջերս նոր ֆիլմ է հայտնվել էկրաններին:

Ես միայն ցանկանում եմ, որ դա ստացվի...

Ինձ թվում է, որ քեզ մի փոքր ժամանակ է պետք: Եթե նրա հետ քեզ հաճելի չլինի, ապա շատ ավելի հեշտ կլինի հեռանալ:

Այո, հաստատ: Շնորհակալ եմ: Ես կմտածեմ այդ մասին: Կարո՞ղ ենք վաղը խոսել:

Անշուշտ:

ՀԱՍԱԿԱԿԻՑ ԱՋԱԿԻՑՆԵՐՆ ԱՅՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԵՆ, ՈՐՈՆՔ ՍԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻՆ, ԵՐԲ ՎԵՐՋԻՆՆԵՐԸ ՀԱՐՑ ԿԱՄ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՆ: ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԽՈՍԵԼ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՄՏԵՐՄԻԿ, ԳԱՂՏՆԻ, և ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՔԵԶ ԾԱՆՈԹԱՑՆԵԼ ՉԱՓԱՀԱՍԻ ՀԵՏ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ:

ԵԹԵ ՈՐԵՎԷ ԱՌՑԱՆՑ ԸՆԿԵՐ ԿԱՄ ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՔԵԶ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՀԱՆԴԻՊԵԼ՝ ԱԿՆՀԱՅՏ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ ՔԵԶ ՊԱՏԿԵՐԵԼՈՒ ԿԱՄ ՔԵԶ ՀԵՏ ՍԵՔՍ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՊԱ ԱՅԴ ԱՆՁԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՈՒՄ:

ԵԹԵ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ և ՁԵՌՔ Է ԲԵՐՈՒՄ ՆՐԱՆՑ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՔՍՈՎ ԶԲԱՂՎԵԼՈՒ ԿԱՄ ՍԵՌԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԻՆ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԴԱ ԿՈՉՎՈՒՄ Է ,ԳՐՈՒՄԻՆԳ: ԴԱ ՍԵՌԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ՁԵՎԵՐԻՑ ՄԵԿՆ Է և ԿԱՐՈՂ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼ ԻՆՉՊԵՍ ԱՌՑԱՆՑ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՑԱՆՑԻՑ ԴՈՒՐՍ: ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈՐՁԵԼ ՍՏԵՂԾԵԼ ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՐՈ ՊԱՏՐԱՆՔ:

հասակակից աջակից

ՄԵՐ ԽՄԲԱՅԻՆ ՉԱԹՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՎՈՂ ՈՐՈՇ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Մենք պետք է լուրջ թեմայի շուրջ խոսենք:

Ողջույն, ինչպե՞ս են գործերը:

Մյուս դասարանում մի նոր տղա կա:

Այո, կարծես որոշ բաներ լսել եմ նրա մասին, բայց ես նրան չեմ դասավանդում:

Երեխաներից ոմանք սկսել են նրան բուլլինգի ենթարկել՝ ստուգելու, թե նա իսկապես այդքան վատն է, որքան նրա համբավն է տարածված: Այնպես որ հիմա բոլորը ծիծաղում են նրա վրա

Դա բավականին մտահոգիչ է: Արի, մենք կարող ենք այստեղ հանգիստ խոսել ... Պատմիր ինձ՝ ինչ է պատահել:

Սկզբում դա ծիծաղելի էր թվում, բայց հիմա, ըստ իս, արդեն անհարմար է այն, ինչ տեղի է ունենում: Նրա դասընկերներից մի քանիսը կեղծ էջ են ստեղծել և սկսել են գրել նրան, թե որքան սիրուն է իր շունը, որքան լավն են նրա ինստագրամի լուսանկարները և որ նա շատ կրքոտ է... նմանատիպ բաներ...

Այդ էջը մի քանի հոգի են վարում:

Սկզբում երեքն էին, իսկ հետո արդեն չգիտեմ:

Հասկանալի է:

Նրանք գրում էին նրան չաթում անդադար՝ առավոտյան, երեկոյան, և որոշ ժամանակ անց դա դուրս եկավ վերահսկողությունից: Կարող եք պատկերացնել:

Լրացել, դա կարող է համարվել պոռնկագրական կադրեր: Փաստորեն նրան դավաճանել են...

Սրանով պատմությունը չի ավարտվում: Քանի որ այդ ամենը տարածվել էր, որոշ նկարներ և նամակներ սկսեցին շրջանառվել: Նա հաստատ չէր ցանկանա, որ որևէ մեկը դրանք տեսնի...Նույնիսկ եղբայրս է դրանք ստացել անձնական հաղորդագրությամբ: Մենք էլ ենք ստացել մեր դասարանի խմբային չաթում: Եվ ով գիտի, թե ուրիշ ովքեր են ստացել...

Ես իսկապես ուրախ եմ, որ պատմեցիր ինձ այս մասին: Դա ոչ միայն ստոր և վտանգավոր արարք է, այլև կարող է քրեական մեղադրանք լինել:

Մենք չենք ուզում այդ մասին հաղորդում տալ ...

Անշուշտ, սա մնում է մեր մեջ: Շնորհակալություն ինձ վստահելու համար: Ես կխոսեմ նրա ուսուցչի հետ, և մենք ամեն ինչ կանենք այս հարցը կարգավորելու համար:

Հիմա ի՞նչ անենք, արդյո՞ք պետք է սքրինշոթեր անել:

Եթե նկարը հանրամատչելի է, այն պետք է ջնջվի, կամ դրա մասին պետք է հաղորդում ներկայացվի հնարավորինս արագ, և դու չպետք է այն կրկին տարածես: Դու գիտե՞ս ինչպես դա անել:

Կարծում եմ՝ այո:

Ես կարող եմ ցույց տալ քեզ, թե ինչպես դա անել, կամ նույնիսկ ուրիշները կարող են օգնել այդ հարցում: Բայց եթե խմբային չաթերում բացահայտ նշում ես, որ համաձայն չես դրա հետ, դա ևս կարող է օգնել այդ իրավիճակում:

Մենք նաև պետք է խոսենք այդ տղայի հետ, բայց չեմ ուզում, որ նա ինչ-որ անմիտ քայլ անի... կամ զայրանա մեզ վրա:

Ցավոք, մենք չենք կարող նրան պաշտպանել այդ ցավից, սակայն կարող ենք օգնել նրան և սատարել, որպեսզի ավելի հեշտ հաղթահարի այն: Արի միասին մտածենք, թե ո՞րն է այս խնդրի լավագույն լուծումը:

ԱՀԱԶԱՆԳԵՔ, ՄԻ՛ ԱՆՏԵՍԵՔ: ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԱՆԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԹԵԺ ԳԾԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԴՐԱՆՔ ՀԵՌԱՑՆԵԼ ՑԱՆՑԻՑ: ՆՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԸ ՏՐԱՄԱԴՐՈՂԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԿԵՏԻՑ ՋՆՋԵԼ ՆԿԱՐՆԵՐԸ: ԲԱԶՄԱԹԻՎ ԵՐԿՐՆԵՐ ՍՏԵՂԾԵԼ ԵՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԹԵԺ ԳԾԵՐ, ՈՐՈՆՔ ԳՐԱՆՑՎԱԾ ԵՆ INHOPE ԿԱՅՔՈՒՄ (WWW.INHOPE.ORG):

ՍԱՏԱՐԵԼ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ԱՐԱԳ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ:

ԵՐԲ ՔՈ ՄԱՍԻՆ ԱԿՆՀԱՅՏ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՆԿԱՐՆԵՐ ԿԱՄ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ ԵՍ ՈՒՂԱՐԿՈՒՄ, ԿԱՄ ԷՐՈՏԻԿ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՍ ՈՒՂԱՐԿՈՒՄ ՈՐԼԷ ՄԵԿԻՆ ՔՈ ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԻՑ ԿԱՄ ԻՆՏԵՐՆԵՏՈՎ, ԴԱ ԿՈՉՎՈՒՄ Է ,ՍԵՔՍԹԻՆԳ: ԵԹԵ ՔՈ 18 ՏԱՐԻՆ ԴԵՌ ՉԻ ԼՐԱՑԵԼ, ԴԱ ԿԱՐՈՂ Է ՀԱՄԱՐՎԵԼ ՊՈՌՆԿԱԳՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ:

ԱՌՑԱՆՑ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԿԱՄ ԱՆԱՐԳԱԿԱՆ (ՕՐԻՆԱԿ՝ ՀԱՐԿԱԴՐԵԼ ՔԵԶ ՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԴՈՒ ՉԵՍ ՑԱՆԿԱՆՈՒՄ, ՆԿԱՐՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾԵԼ ՔԵԶ): ԴԱ ՆԵՐԱՌՈՒՄ Է ՔՈ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՔՈ ԿԱՄՔԻՆ ՀԱԿԱՌԱԿ, ՇԱՆՏԱԺԸ, ԲԱՑԱՌՈՒՄԸ, ԹՐՈԼԻՆԳԸ, ՔՈ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՄ ՎԱՐՔՈՎ:

ուսուցիչ

ՑԱՆԿԱՑԱԾ ՈՔ, ՈՎ ՊԱՀՈՒՄ ԿԱՄ ՏԱՐԱԾՈՒՄ Է ԵՐԵԽԱՅԻ (ՄԻՆՉև 18 ՏԱՐԵԿԱՆ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ) ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՆԿԱՐՆԵՐ և ԻՐԱՎԱՋՈՐ ՏԱՐԻՔԻ Է, ԿԱՐՈՂ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԴՐԱ ՀԱՄԱՐ:

ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ ԿԱՐԼՈՐ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԵԹԵ ԴԱ ԲԽՈՒՄ Է ՏՎՅԱԼ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐԻՑ, ՈՐՈՇ ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՑ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ, ՄԱՆԿԱԲՈՒՅԺՆԵՐ ԿԱՄ ՔՈ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ) ԿԱՐՈՂ Է ՆԱԼ ՊԱՀԱՆՋՎԵԼ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:

ԵԹԵ ԸՆԿԵՐՈՋԻՑԴ ՍՏԱՆՈՒՄ ԵՍ ԱՅԴՊԻՍԻ ՆԿԱՐՆԵՐ ԿԱՄ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ, ԱՊԱ ԴՈՒ ՈՐԼԷ ՍԽԱԼ ԲԱՆ ՉԵՍ ԱՐԵԼ, ՍԱԿԱՅՆ ԴՐԱՆՔ ՔՈ ՀԵՌԱԽՈՍԻ ՄԵՋ ՊԱՀԵԼԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՊԱՏԺԵԼԻ ԼԻՆԵԼ: ԴՈՒ ՊԵՏՔ Է ԴՐԱՆՔ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՋՆՋԵՍ և ՉՏԱՐԱԾԵՍ ԿԱՄ ՉՈՒՂԱՐԿԵՍ ԱՅԼՈՑ:

ՈՒՐԵՄՆ ՍԱ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է

ՕՐԵՆՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԱՅՆ ՆԿԱՐՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՊԱՏԿԵՐՈՒՄ ԵՆ 18 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻՆ ՍԵՔՍՈՒԱԼ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԿԱՄ ՍԵՔՍՈՒԱԼ ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ ԿԱՄ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ ՆՐԱՆՑ ՍԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ, ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈՌՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ:-ՄԻԳՈՒՑԵ՝ ՊՈՌՆՈԳՐԱՖԻԱ

ՑԱՆԿԱՑԱԾ ՈՔ, ՈՎ ԱՅԴՊԻՍԻ ՆԿԱՐՆԵՐ ԿԱՄ ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ, ՊԱՀՈՒՄ, ՄԱՏՉԵԼԻ ԴԱՐՁՆՈՒՄ, ՏԱՐԱԾՈՒՄ ԿԱՄ ԴՐԱՆՔ ԴԻՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԱՅՑԵԼՈՒՄ Է ԿԱՅՔԵՐ, ԿԱՐՈՂ Է ՊԱՏԺՎԵԼ: ՕՐԵՆՔԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է 18 ՏԱՐԻՆ ՉԼՐԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՍԵՔՍՈՒԱԼ ԲՆՈՒՅԹԻ ՆԿԱՐՆԵՐԻ և ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԻՑ ԿԱՄ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԻՑ:

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՏԱՐԻՔԸ ԿԱԽՎԱԾ Է ՔՈ ԵՐԿՐԻՑ, ՀՆԱՐԱՎՈՐ Է, ՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵՍ, ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ 18 ՏԱՐԵԿԱՆԻՑ ՓՈՔՐ ԵՍ: ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԸ ՀԱՃԱԽ 14 ՏԱՐԵԿԱՆՆ Է, ԻՆՉՊԵՍ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ, ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ԲԱՅՑ ԱՅՆ ՏԱՏԱՆՎՈՒՄ Է ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ: ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ և ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ՝ 13 ՏԱՐԵԿԱՆՆ Է, ԲԵԼԳԻԱՅՈՒՄ, ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐՈՒՄ և ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ՝ 12-Ը, ԻՍԿ ՄԹ-ՈՒՄ և ՇՎԵՅՑԱՐԻԱՅՈՒՄ՝ 10-Ը: ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ `14 ՏԱՐԵԿԱՆ

Բարև, ես մի հարց ունեմ:

Բարև, ինչո՞վ կարող եմ օգնել:

Իմ ընկերուհիներից մեկը թողել է իր զուգընկերոջը, որը հիմա նրան շանտաժի է ենթարկում՝ ասելով, որ նրա լուսանկարները կտարածի որոշ կայքերում:

Ինձ պարզապես հետաքրքիր է՝ ինչ կլինի, եթե այդ տղան անի դա և ինչ կարելի է անել:

Քանի՞ տարեկան է ընկերուհիդ:

17:

Հասկանալի է: Կարո՞ղ ես մի փոքր օգնել ինձ, ի՞նչ տեսակի նկարների մասին է խոսքը:

Կան մի քանի մերկ նկարներ կամ գրեթե մերկ և որոշ շատ սեքսուալ նկարներ:

Լավ է, որ գրեցիր, քանի որ օրենքները բավականին խիստ են մինչև 18 տարեկան անձանց մերկ կամ կիսամերկ նկարների տարածման հարցում:

😱😱😱

Ցանկացած ոք, ով այդպիսի նկարներ կամ տեսանյութեր է հրապարակում, տարածում կամ փոխանցում ուրիշներին, կարող է ենթարկվել քրեական հետապնդման:

Քո ընկերուհու նախկին զուգընկերը կարող է պատժի ենթարկվել այդ լուսանկարները անելու, տարածելու կամ հրապարակելու համար, անգամ եթե նա նույնպես 18 տարեկանից փոքր է:

Նույնիսկ եթե աղջիկը համաձայնել է, որ իր զուգընկերը լուսանկարի՞ իրեն այդպես, կամ եթե նա ինքն է նրան ուղարկե՞լ այդ լուսանկարները: 🤔

Նույնիսկ եթե նա ինքն է ուղարկել այդ լուսանկարները, կամ դրանք արվել են իր համաձայնությամբ:

Փաստորեն նշանակություն չունի, թե ում են պատկանել այդ լուսանկարները:

Այո, քանի որ օրենքով պատժելի է ինչպես այդ պատկերները լուսանկարելը, այնպես էլ դրանք պահելը:

Այսինքն՝ դա պատժելի է, եթե նույնիսկ նա միայն պահու՞մ է դա իր հեռախոսում:

Այո: Իրականում կարող է վարույթ հարուցվել ցանկացած անձի դեմ, որն այդպիսի լուսանկար է ստանում, եթե այն ջնջելու փոխարեն պարզապես պահում է կամ տարածում այն:

Նույնիսկ եթե դա իր սեփական լուսանկա՞րն է:

Սովորաբար միայն եթե նկարում պատկերված է մեկ ուրիշը:

😀

Եթե այս ամբողջ պատմությունը հրապարակվի, իմ ընկերուհին խնդիրներ չի՞ ունենա: 🤔

Նա խնդիրներ չի ունենա, բայց նրա նախկին զուգընկերը և ցանկացած այլ ոք կարող է պատժվել, եթե նրանք հրապարակեն լուսանկարները:

Ինչպե՞ս կարող ենք հաղորդում ներկայացնել: Արդյո՞ք ծնողները պետք է իմանան այդ մասին:

Երեխաները նույնպես կարող են հաղորդում ներկայացնել՝ ծնողների հետ կամ առանց նրանց:

ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԱՆԵԼ ԿԱՄ ՊԱՀԵԼ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՍԵԼՖԻՆԵՐԸ, ԵԹԵ ՆՐԱՆՔ ՀԱՍԵԼ ԵՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ:

չաթ

ԹԵԺ ԳԾԵՐՆ ՕԳՏԱԿԱՐ ԵՆ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ՓՈՐՁՈՒՄ ԵՔ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ, ՍԱԿԱՅՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱ ԼՈՒՐՋ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ: ԱՅՆ ՊԱՀԻՆ, ԵՐԲ ԻՐԱՎԱՍՈՒՄ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ ԵՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ, ՆՐԱՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՄԻՇՏ ՀԵՏԱՔՆՆԵԼ ԴԵՊՔԸ: ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ՆԿԱՐՆԵՐԸ ՏԵՂԱԴՐՈՂ ԱՆՁՆ ԱՅԼ ԵՐԿՐՈՒՄ Է: ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԱՎ ՏԵՂԵԿԱՑՎՈՒՄ ԵՆ ԲՈՂՈՔԻ ՄԱՍԻՆ:

ԵԹԵ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԵՔ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ, ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱՊՎԵԼ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏ, ՈՐՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՋԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

HTTP://WWW.SACCARMENIA.ORG/

ՔՈ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ և ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԼԻՆԵՆ:

Ոստիկանությունը կտեսնի՞ այդ լուսանկարները:

Երբ վարույթ է հարուցվում, քննիչները պետք է նույնականացնեն տուժողներին, ուստի, որպես կանոն, նրանք տեսնում են այդ կադրերը: Լուսանկարները գրանցվում են որպես ապացույց, բայց սահմանափակ թվով մարդիկ կարող են տեսնել ապացույցները:

Իսկ եթե նրա նախկին զուգընկերը ձերբակալվի՞:

Իրավասու մարմինները հաշվի են առնում հանցագործության ծանրությունը և հանգամանքները: Նպատակը միշտ այն է, որ հետևանքները լինեն արդյունավետ, համարժեք և զսպող: Իրավասու մարմինների ցանկացած որոշման դեպքում դա նրա պատասխանատվությունն է, այլ ոչ թե ընկերուհուդ մեղքը:

Օրինա՞կ:

Ազատազրկում, տուգանք, բայց հնարավոր է նաև, որ նրան բացառեն ինչ-որ բանից կամ հրահանգեն ինչ-որ կրթական ծրագիր անցնել:

Իսկ ինչպե՞ս կարող է ընկերուհիս ստիպել նրան ջնջել լուսանկարները:

Իրավասու մարմինը կարող է ստիպել նրան ջնջել նկարները, բայց դրա մասին նրա հետ խոսելիս ընկերուհիդ նույնպես կարող է օգնել նրան հասկանալ իր արարքի հետևանքները:

Շատ լավ, հասկացա, շնորհակալություն, ցտեսություն: 😍

Այլ հարցերի դեպքում զանգահարիր ինձ առանց անհարմար զգալու: Ցտեսություն:

ԵՐԲ ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎՈՒՄ

(...)Այժմ, երբ ծանոթացանք, թույլ տվեք պատմել՝ ինչ սպասել դատավարության ընթացքում: Ես կփորձեմ պարզ խոսել, բայց եթե ինչ-որ բան հասկանալի չէ, խնդրում եմ երկուսդ էլ առանց կաշկանդվելու հարցեր տվեք:

(երեխա) Լավ:

(ծնող) Շնորհակալություն:

Ձեր պաշտպանությունը շատ կարևոր է քննության և դատաքննության ընթացքում: Ձեր իրավունքները և ձեր լավագույն շահերը պետք է միշտ հարգվեն:

(ծ) Ինչի՞ն պետք է պատրաստ լինենք:

Քննության նպատակն է պարզել տեղի ունեցածը: Այդ ընթացքում հավաքվում են փաստեր կամ ապացույցներ, որոնք կքննվեն դատարանում: Ձեզ կհրավիրեն լսումներին: Այն, ինչ դուք կասեք այնտեղ, ձեր ցուցմունքները, կարող են օգտագործվել որպես վկայություն կամ ապացույց դատարանում, եթե դուք դրանք հետ չվերցնեք:

(ե) Ես պետք է ամեն ինչ պատմեմ:

Պատահածի մասին ազնիվ խոսելով՝ դու օգնում ես քննությանը: Դա նաև քո պարտականությունն է: Բացարձակ անհրաժեշտության դեպքում դատավորը կամ այլ մարմինների ներկայացուցիչները կարող են ավելի մանրամասն հարցեր տալու կարիք ունենալ:

(ծ) Մի՞թե բացարձակ անհրաժեշտություն կա, որ իմ որդին ցուցմունք տա:

Ձեր որդու ցուցմունք տալը կարող է անհրաժեշտ լինել, եթե ոստիկանությունն այլ կերպ չի կարողանում ապացույցներ ձեռք բերել, կամ եթե Արան ուզում է ցուցմունք տալ, ապա նրան կլսեն:

(ծ) Ու՞ր պետք է գնանք:

Դուք նամակ (ծանուցում) կստանաք, որում նշված կլինի իրավասու մարմնի անվանումը և հասցեն: Որոշ դեպքերում հնարավոր է նաև անձամբ չներկայանալ լսումներին, այլ առցանց տեսազանգ կատարել:

(ծ) Նրա համար հեշտ չէ այդ մասին խոսելը: Բավական է միայն մեկ անգամ դա պատմել:

Ոստիկանությունը պետք է խուսափի կրկնակի հարցաքննություններից, ուստի նա ստիպված չի լինի կրկին պատմել այդ մասին: Դրա համար հարցաքննությունները կարող են տեսաձայնագրվել, ինչը կարող է օգտագործվել որպես ապացույց դատարանում: Այդուհանդերձ, հնարավոր է, որ նա ստիպված լինի մի քանի անգամ պատմել այդ մասին:

(ե) Մայրիկը կարո՞ղ է ինձ հետ գալ:

Այո: Քանի դեռ քո 18 տարին չի լրացել, քո ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է ներկա գտնվի: Երբեմն քո ցանկությամբ կարող ես ընտրել որևէ չափահասի, որը կուղեկցի քեզ:

(ե) Ուրիշ ո՞վ է լինելու այնտեղ:

Ոստիկանության աշխատակից, որը հարցեր է տալիս: Բայց դու նաև կարող ես խնդրել, որ հոգեբան լինի այնտեղ: Որպես քո փաստաբան՝ ես նույնպես կարող եմ ներկա գտնվել:

(ե) Այս ամենը սկսողը նույնպես այնտեղ է լինելու՞:

Պետք է այնպես արվի, որ դու չհանդիպես քեզ նեղացնողին: Դա միշտ այդպես է: Հակառակ դեպքում դա պետք է բխի քո լավագույն շահերից և նախապես քննարկվի քեզ հետ:

(ծ) Որքան գիտեմ, տեղական լրատվական թերթն արդեն հետաքրքրվել է այս դեպքով ...

Հանրությունը նույնպես կարող է ցանկացած պահի բացառվել՝ ըստ պահանջի: Լսումները միշտ դռնփակ են եղել: Մամուլը չի կարող հրապարակել որևէ նյութ, որը թույլ կտար նույնականացնել ձեզ:

(ծ) Մենք կարո՞ղ ենք դիմել որևէ մեկի օգնությանը:

Ցանկության դեպքում Արան կարող է խոսել մասնագետների հետ, որոնք կօգնեն նրան հաղթահարել դատավարության և հանցագործության ծանր բեռը: Անշուշտ, կարող է նաև մատչելի լինել իրավաբանական օգնություն, ինչպես նաև արտաքին խմբերին, հիմնադրամներին և միություններին օգնության դիմելու հնարավորություն:

ԴՈՒ ԿՍՏԱՆԱՍ ԱՅՆ ԱՄԲՈՂՋ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԿՕԳՆԻ ՔԵԶ ՀԱՍԿԱՆԱԼ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ԻՄԱՆԱԼ, ԹԵ ԻՆՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՍԱՆԵԼԻ ՔԵԶ: ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ՀԱՍԿԱՆԱՍ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ՔՈ ԴԵՐԸ և ՔՈ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ:

ԴՈՒ ՈՒՆԵՍ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆԸ ՊԵՏՔ Է ԱՊԱՀՈՎԻ, ՈՐ ԴՈՒ ՉԵՍ ՏՈՒԺՈՒՄ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ և ՍՏԱՆՈՒՄ ԵՍ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՄԲՈՂՋ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ՉՊԵՏՔ Է ԶԳԶԳՎԵՆ, ՍԱԿԱՅՆ, ՑԱՎՈՔ, ԴԱ ԵՐԲԵՄՆ ԿԱՐՈՂ Է ԱՄԻՍՆԵՐ ԿԱՄ ՏԱՐԻՆԵՐ ՏԱԼԵԼ:

ՔՈ ԿԱՐԾԻՔԸ ԿԱՐԵՎՈՐ Է, ԱՅՆ ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ԼՍՎԻ և ՀԱՇՎԻ ԱՌՆՎԻ: ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՍ, ԿԱՐՈՂ ԵՍ ՔՈ ՏԵՍԱԿԵՏՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼ ՄԻՋՆՈՐԴԻ, ՕՐԻՆԱԿ՝ ԾՆՈՂՆԵՐԻԴ ԿԱՄ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ ԳԵՂԵՑԻԿ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱԳԾՎԱԾ և ՀԱՐՄԱՐԵՑՎԱԾ ԵՆ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ: ՀԱՐՑՐՈՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻՆ ԿԱՄ ՔՈ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ՝ ՀՆԱՐԱՎՈ՞Ր Է ԴԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՔԵԶ ՀԱՄԱՐ:

ԵՐԲԵՄՆ ԼՍՈՒՄՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ Է ՀՈԳԵԲԱՆԸ: ՈՐՈՇ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԱԼԼ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ, ՈՐ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԻ ՆՈՒՅՆ ՍԵՌԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ:

ԵԹԵ ԴՈՒ ՉԵՍ ԽՈՍՈՒՄ ՏՎՅԱԼ ԼԵԶՎՈՎ, ՔԵԶ ՀԵՏ ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ԹԱՐԳՄԱՆԻՉ ԼԻՆԻ: ՏԵՂԵԿԱՑՐՈՒ ՔՈ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ԿԱՄ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, և ՆՐԱՆՔ ԴԱ ԿԿԱԶՄԱԿԵՐՊԵՆ:

ՔՈ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՇՏ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ Է: ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆԵՆ ՔԵԶ ԱՀԱԲԵԿՈՒՄԻՑ, ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ և ԿՐԿՆԱԿԻ ՏՈՒԺՈՒՄԻՑ: ԵԹԵ ՔԵԶ ԱՆՀԱՐՄԱՐ ԵՍ ԶԳՈՒՄ ԿԱՄ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՍ, ԽՈՍԻՐ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՔԵԶ ՕԳՆՈՂ ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ

ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՄՈՒԼԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ:

ՔՈ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆՎԻ: ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՌԱԴԻՈՅՈՎ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ, ՔՈ ԱՆՈՒՆԸ և ԴԵՄՔԸ ՊԵՏՔ Է ՔՈՂԱՐԿՎԱԾ ԼԻՆԵՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ, և ՔՈ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ՈՐԵՎԷ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՉԻ ԿԱՐՈՂ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ:

փաստաբան

ԵԹԵ ՔՈ ԾՆՈՂՆԵՐԸ ԿԱՄ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՎՆԱՍԵԼ ԿԱՄ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ ՔԵԶ, և ՔՈ ՇԱՀԵՐԸ ՎՏԱՆԳՎԱԾ ԵՆ, ԱՊԱ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ՄԱՐԴ՝ ՈՐԵՎԷ ՈՒՍՈՒՑԻՉ, ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ ԿԱՄ ԱՅԼ ՄԱՆԿԱՎԱՐԺ՝ ՔԵԶ ՕԳՆԵԼՈՒ և ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՅՆՊԵՍ ՈՐ ԴՈՒ ԵՐԲԵՔ ՍՏԻՊՎԱԾ ՉԵՍ ԼԻՆԻ ՀՈՒՅՑԴ ԴՆԵԼ ԱՅՆ ԱՆՁԻ ՎՐԱ, ՈՐԸ ՔԵԶ ՉԱՐԱՇԱՀԵԼ Է:

ՔՈ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Ոչ ոքի չի թույլատրվում վիրավորել կամ շահագործել քեզ: Քո մարմինը քոնն է: Ոչ ոք չի կարող որևէ բան անել քո մարմնի հետ քո կամքին հակառակ: Նաև ոչ ոք չի կարող խաղալ քո զգացմունքների հետ՝ քեզ վրա ճնշում գործադրելու համար: Պետությունը խոստացել է հնարավոր ամեն ինչ անել քեզ պաշտպանելու համար:

Որտեղ է դա խոստացել պետությունը:

2007 թվականին Իսպանիայի Լանզարոտ կղզում ստորագրվել է Եվրոպայի խորհրդի միջազգային կոնվենցիա: Այն կոչվում է Լանզարոտի կոնվենցիա:

Ո՞ր երկրներն են ներգրավված:

Եվրոպական մայրցամաքի գրեթե բոլոր երկրները համաձայնություն են տվել Լանզարոտի կոնվենցիայի և քո մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Ինչի՞ մասին է Կոնվենցիան:

Այն արգելում է երեխաների սեռական շահագործումը և չարաշահումը: Ցանկացած ոք, ով վիրավորում է որևէ երեխայի, հանցագործություն է կատարում: Կոնվենցիայի նպատակն է կանխարգելել դա, պաշտպանել տուժածներին և պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր վնաս են հասցրել երեխաներին:

Ինչպե՞ս դա կարող է անել պետությունը:

Պետության պարտականությունն է քեզ տեղեկացնել քո իրավունքների մասին, որպեսզի հասկանաս, թե որն է չարաշահումը, իմանաս սեռական դաստիարակության և մասին, ինչպես նաև իմանաս, թե անհրաժեշտության դեպքում ում կարող ես դիմել: Պետությունը պետք է քայլեր ձեռնարկի՝ ապահովելու, որ երեխաների հետ աշխատող մասնագետները լավ պատրաստված են և գործում են հանուն քո լավագույն շահերի: Պետությունը նաև պետք է քննի այդ հանցագործությունները և դատական կարգով պատասխանատվության ենթարկի մեղավորներին, և այդ նպատակով համագործակցի այլ պետությունների հետ:

Որևէ մեկը ստուգո՞ւմ է՝ արդյոք պետությունն իսկապես կատարում է իր խոստումը:

Դա վերահսկում է Լանզարոտի կոմիտեն, որը պետություններին հարցեր է ուղղում, իսկ պետությունները պետք է պատասխանեն: Կոմիտեն նաև հետաքրքրվում է քաղաքացիական հասարակության և երեխաների կարծիքներով:

Ի՞նչ է Եվրոպայի խորհուրդը:

Եվրոպայի խորհուրդը կազմված է 47 անդամ պետություններից Եվրոպայի ողջ մայրցամաքից: 1949 թվականից ի վեր այն ձգտում է խթանել ժողովրդավարությունը և պաշտպանել մարդու իրավունքները:

Լանզարոտի կոնվենցիա

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ)ինն են, և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակության որևէ մաս չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ տարածվել որևէ ձևով կամ եղանակով՝ էլեկտրոնային (լազերային կրիչ, ինտերնետ և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով, առանց Հաղորդակցության գծով տնօրինության նախնական գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Եվրոպայի խորհուրդը երախտապարտ է սույն ծրագրին «*Վերջ երեխաների հանդեպ բռնությանը*» ֆոնդի տրամադրած ֆինանսական աջակցության համար:

Խմբագիր՝ Բարբարա Նեմեթ, «Hintalovon» Երեխաների իրավունքների հիմնադրամ

Պատկերազարդումը՝ ,Hintalovoոե Երեխաների իրավունքների հիմնադրամ

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն F-67075 Strasbourg Cedex http://book.coe.int

© Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր, 2019

Տպագրված է Եվրոպայի խորհրդում

Սույն գրքույկը պատրաստվել է երեխաների հետ համագործակցությամբ՝ «Hintalovon» Երեխաների իրավունքների հիմնադրամի աջակցությամբ: Երեխաներն արժեքավոր ներդրում են ունեցել՝ որոշելով, թե ինչը և ինչպես պետք է բացատրվի քեզ:

Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են այստեղ՝
www.coe.int/children

Ուղարկեք ձեր կարծիքները մեր էլեկտրոնային փոստին՝
lanzarote.committee@coe.int

ARM

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

HINTALOVON
Child Rights Foundation

End Violence Against Children
THE FUND

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE